ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1969 թ. № 2-ում հրապարակված Հ. Քյուրդյանի «ԺԴ դարու մանրանկարիչ Մոմիկի մասին» խորագիրը կրող նամակի առթիվ անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը։

Հեղինակը այդ նամակում բերում է այժմ ԱՄՆ-ի Հարդֆորդ քաղաքի Յունիրն Թեոլոջիկալ հաստատության գրադարանում պահվող Մոմիկի մի ձեռագրի հիշատակարանը, որտեղ Մոմիկը նշում է, որ 1307 թ. սկսել է մի ավետարանի գրչությունը, սակայն նկարազարդումները չի կարողացել կատարել «յաչաց վատեալ» հետևանքով, և միայն 24 տարի հետո, 1331 թ. «լոյս աչաց իմոց դարձաւ առ իս»։

Ելնելով դրանից, Հ. Քյուրդյանը հարցականի տակ է առնում Մոմիկի կողմից Թամթա խաթունի պատվիրած խաչքարի (1308) և Արփայի եկեղեցու կառուցման (1321) թվագրությունները, առաջինը տանելով 1307-ից առաջ, իսկ երկրորդը՝ համարելով կառուցված 1331 թ. հետո։

Թվում է, որ նման տեղաշարժումների հետ չի կարելի համաձայնվել և ահա թե ինչու։ Բանն այն է, որ թե՛ նշված խաչքարը և թե՛ Արփայի եկեղեցին ունեն իրենց թվագրությունները հաստատող արձանագրություններ, գրված իր՝ Մոմիկի կողմից, և նախքան այդ թվագրությունները տեղաշարժ անելը նամակի հեղինակը պետք է որ անդրադառնար բուն արձանագրություններին։ Արփայի եկեղեցու արձանագրությունը ունի հետևյալ բովանդակությունը.

ԵՍ ՏՐ ՅՈՎԱՆՆԵՍ ԱՒՐՊԵԼ ՍՈՒՆԵԱՑ ԱՐՀԷՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՆՈՂ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵԼ ԱՂԱՉԵՄ ԵՒ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆՆ ԵՒ ՁԱՐԵԱՆ ՄԵՐՁԱՈՐՆ ԻՄ ՁՔԱՋ ՄԵՆԱՄԱՐՏԻԿՆ ՁԲՈՒՐԹԼԷՆ ԵՒ ՁԴԺՇԽՈԱՓԱՌ ՔՍԱՍԷՐ ՁՈՅԳՆ ԻՒՐ ՁՎԱԽԱԽՆ ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ՁԱՒԱԿԱՒՔ ԻՒՐԵԱՆՑ ԲԷՇՔԷՆԻՆ ԵՒ ԻՒԱՆԷԻՆ ԹՎ. ՁՀ։ ՇԱՐԺ ԵՂԵՒ ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊ[1]։

Դժվար չէ տեսնել, որ արձանագրությունը գրված է Յովհաննես եպիսկոպոսի անունից, որն այստեղ հանդես է գալիս եկեղեցու պատվիրատուի դերում։ Միաժամանակ հայտնի է, որ նա գահակալել է 1304—1324 թթ. ընթացքում[2], մի բան, որը անհնարին է դարձնում առաջին դեմքով գրված այս արձանագրությունը շուրջ 10 տարով ետ բերելը և 1331 թ. հետո ընկած ժամանակաշրջանով թվագրելը։ Ավելին, ոչ մի հիմք չկար նույն այս արձանագրության մեջ հիշատակելու տասը տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժի մասին։ Ակնհայտ է դառնում, որ եկեղեցու շինարարությունը ավարտվել է նույն այդ 1321 թ., և այդ ժամանակ էլ հենց եղել է այն երկրաշարժը, որը և Մոմիկը անհրաժեշտ է համարել հիշատակել։ Որ այդ երկրաշարժը զգալի ավերածություններ է պատճառել նաև Նորավանքին, վկայում է նրա գավթի վերակառուցման փաստը 1321 թ.։ Այդ է հաստատում Արփայի եկեղեցու և Նորավանքի գավթի արևմտյան ճակատի 1321 թ. արձանագրությունը կրող պատկերաքանդակների համեմատական ուսումնասիրությունը, և կասկած չի մնում, որ և՛ Արփայում, և՛ Նորավանքում աշխատել է ոչ այլ ոք, քան ինքը՝ Մոմիկը։ Միայն թե 1321 թ. նա արդեն ավարտել էր Արփայի եկեղեցու շինարարությունը, իսկ Նորավանքի կործանված գավթի վերակառուցումը նոր էր սկսում։

Ավելին, բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Հովհաննես եպիսկոպոսի հաջորդը՝ Ստեփանոս եպիսկոպոսը հատկապես Մոմիկին է հանձնարարում Եղեգիսի այսպես կոչված Ջորաց եկեղեցու կառուցման գործը, որը, ինչպես կարելի է եզրակացնել վիմական արձանագրություններից, ավարտվել է ոչ ուշ, քան 1328 թ.։ Այս եկեղեցին կառուցելուց հետո է, որ Մոմիկը սկսում է Նորավանքում երկհարկ դամբարան-եկեղեցու կառուցումը և ավարտում է այն 1339 թ.։ Նույն թվականին էլ մահանում է նա, և նրա հիշատակին Նորավանքում մի գեղեցիկ խաչքար են կանգնեցնում։

---

1 Ս. Բարխուդարյան, Հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 81։

2 Հ. Ճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 609։

Այս ամենից հետո դժվար չէ տեսնել, որ 1307 թ. հետո շուրջ 24 տարի տևող «յաչաց վատեալ» շրջանը բնավ էլ ստեղծագործական ամլության շրջան չէր, և եթե Մոմիկը նույնիսկ զրկված էր մանրանկարչությամբ զբաղվելու հնարավորությունից, աչքերի տկարությունը հավանաբար այն աստիճանի չէր, որ նա չկարողանար զբաղվել իրեն այնքան սիրելի քանդակագործությամբ և ճարտարապետական արվեստով։ Եվ իսկապես, բավական էր, որ Մոմիկի մոտ զարգանար նույնիսկ ամենաթույլ կարճատեսություն (մի բան, որ կարող էր հետևանք լինել ինչպես լարված աշխատանքի, այնպես էլ վանական խուցերի թույլ լուսավորության), որպեսզի նա զրկվեր միլիմետրային և է՛լ ավելի մանր դրվագավորում պահանջող մանրանկարների վրա աշխատելու հնարավորությունից։ Սակայն թույլ կարճատեսությունը, որը ակնոցների բացակայության պայմաններում անհաղթահարելի խոչընդոտ էր մանրանկարչությամբ զբաղվելու համար, բնավ չէր կարող խանգարիչ հանգամանք հանդիսանալ կերտելու հայտնի խաչքարերը և վեր բարձրացնելու իր հոյակերտ կառուցվածքները։

Լեզվաբան Վ. Առաքելյանը մեզ հայտնեց նաև հետևյալ փաստը. Հիշատակարանի մեջ Մոմիկը գրում է. «Յուսովն որ առՅՍ (Յիսուս) զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս»։ Այս տողերից հետո տալիս է թվականը՝ ՁՁ, որ համապատասխանում է ներկա թվականության 1331-ին։ Ուրեմն Մոմիկը հիվանդացել է 1307 թ. և առողջացել է 1331 թ.։ 1307 թ. մինչև 1331 թ. կազմում է ամբողջ 24 տարի։ Այն «երանելի» տարիներին հրաշքի նման բան կլիներ՝ 24 տարի աչքացավով տառապելուց հետո առողջանալ։ Այս մեկ հանգամանք։

Հարգելի բանասերը նկատի չի առել «զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս» նախադասությունը։ Եթե Մոմիկը 24 տարի տառապած լիներ աչքացավով, երբեք չէր ասի «զկնի սակաւ ամաց լոյս աչաց իմոց դարձաւ առ իս», որովհետև քսանչորս տարիները «սակաւ ամք» չէին կոչվի։ Պետք է հաստատ պնդել, որ բանասերի բերած ՁՁ թվականը, որ վերաբերում է առողջանալու տարվան, կամ սխալ է կարդացված և կամ ձեռագրական վրիպում է։

Մյուս կողմից՝ ենթադրվում է, որ Մոմիկը ծնվել է 1260-ական թթ.։ Այդ նշանակում է, որ 1331 թ. նա արդեն վաթսունը անց մարդ էր։ Եթե նա 40—45 տարեկանում հիվանդացել էր աչքացավով, քսանչորս տարվա հիվանդությունը նրան վաղուց կուրացրած պետք է լիներ։

Ամփոփելով, կարող ենք ասել, որ ավետարանի հիշատակարանում նշված այս թռուցիկ ակնարկը, անշուշտ, մի ուշագրավ էջ է բացում Մոմիկի կենսագրության մեջ, սակայն այն բնավ չի կարող հիմք ծառայել վերանայելու նրա հոյակերտ կառույցների թվագրումները։ Առավել արժեքավորն այստեղ այն է, որ պարզ է դառնում, թե ինչու Մոմիկը, որն այնքան հիանալի մանրանկարչական գործեր էր թողել մինչև 1307 թ., հետագայում բնավ չի անդրադառնում մանրանկարչական արվեստին և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնում ճարտարապետական արվեստին։

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ